«ՋՐԱՌ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ I

## «ֆինանսական հաշվետվություններ»

2021թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա վերաբերյալ

Հունիս 2022թ.

**Բովանդակություն**

Ներքին աուդիտորի հաշվետվություն ........ 3
1. Ընդհանուր տեղեկություններ ........ 6
2. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ........ 7
3. Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն ........ 8
4. Սեփական կապիտալի մասին հաշվետվություն ........ 9
5. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ........ 10
6. Ակտիվների, պարտավորությունների, եկամուտների ու ծախսերի բացվածքը և այլ տեղեկություններ ........ 11
7. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր ........ 22

-

# Ներքին աուդիտորի հաշվետվություն

***Ներքին աուդիտի նպատակը***

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Աուդիտոր) ներքին աուդիտի ծառայությունների մատուցման վերաբերյալ 2022թ.-ի փետրվարի 24-ին կնքված N «ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-2022/4-1» պայմանագրի, Աուդիտորի կողմից իրականացվել է նախարարության ենթակա «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) 2021թ. ժամանակաշրջանի ներքին աուդիտ (այսուհետև՝ աուդիտ կամ ներքին աուդիտ):

***Ներքին աուդիտի շրջանակը***

Աուդիտն իրականացվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և ներքին աուդիտի գործունեության ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներով:

Աուդիտը ներառել է Կազմակերպության ֆինանսական և համապատասխանության աուդիտ, մասնավորապես.

- ✓ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման իրավական պահանջներին համապատասխանությունը,
- ✓ Գնումների գործընթացի համապատասխանությունը,
- ✓ Աշխատանքային իրավական հարաբերությունների գործընթաց,
- ✓ Ակտիվների և պարտավորությունների գույքագրման գործընթաց,
- ✓ Վառելիքի ծախսերի ստուգում, վերլուծություն:

-

***Ներքի աուդիտի մեթոդոլոգիան***

Ներքին աուդիտի ներառել է ինչպես հսկողական համակարգի թեստեր, այնպես էլ ըստ էության թեստեր, որոնք իրականացվել են ստուգումների, հարցումների, ինչպես նաև վերլուծական ընթացակարգերի միջոցով:
Ներքին աուդիտի իրականացման նպատակով ձեռք ենք բերել հասկացողություն կազմակերպության գործունեության վերաբերյալ:
Ֆինանսական աուդիտի ընթացքում կիրառվել են վերլուծական ընթացակարգեր և մանրամասների ստուգման ընթացակարգեր: Հոդվածների ստուգման ընթացակարգերի ընտրանքը կատարվել է կամայական (ոչ վիճակագրական) մեթոդի հիման վրա:

Աուդիտին ներհատուկ սահմանափակման պատճառով, աուդիտը չի կարող բացահայտել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության բոլոր սխալները կամ իրավական պահանջներին անհամապատասխանությունները:

Աուդիտի ընթացքում բացահայտված հարցերը ներկայացվել են այս հաշվետվությունում: Ներկայացված հարցերը և առաջարկները նպատակ ունեն օժանդակելու Կազմակերպության ղեկավարությանը և մարզպետարանին՝ Կազմակերպության միջոցների արդյունավետ օգտագործման, ներքին վերահսկողության բարձրացման գործառույթների արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

***Արդյունքներ***

- Իրականացված ներքին աուդիտի արդյունքները ամփովել են այս և կից հաշվետվություններում (Հաշվետվություն I և II):
- Ներքին աուդիտի ընթացքում նկատված հարցերի վերաբերյալ, որոնք վերաբերվում են ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստված 2021թ.-ի վերաբերյալ կից ֆինանսական հաշվետություններին և մեր շրջանակում ներառված իրավական կարգավորումներին

-

համապատասխանությանը, ներկայացրել ենք առաջարկություններ, որոնք ամփոփված են Հաշվետվություն II-ի «Գործողությունների ծրագիր» բաժին 1-ում:

- Նշված հարցերը, առաջարկությունները և գործողությունների ծրագիրը քննարկվել է «Ջրառ» ՓԲԸ-ի ղեկավարության հետ:

Քանի որ ներքին աուդիտի ծառայությունը չի համարվում Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան իրականացված աուդիտորական ծառայություն, ապա մենք չենք արտահայտում աուդիտորական եզրակացություն կամ ԱՄՍ-ներով սահմանված որևէ այլ տեսակի աուդիտորական հավաստիացում կից ֆինանսական հաշվետվությունների, կազմակերպությունում ներդրված հսկողական համակարգերի կամ մեր վերոնշված հաշվետվություններում ներառված այլ ֆինանսական կամ ոչ ֆինանսական տեղեկատվություն վերաբերյալ:

Հարգանքով,

| | |
|---|---|
| Հրաչիկ Դավթյան | Գնել Խաչատրյան |
| Հանրային հատված ներքին աուդիտոր | Աուդիտի ղեկավար |

«Բի Դի Օ Արմենիա» ՓԲԸ
10.06.2022թ.

-

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### Կազմակերպությունը

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերությունը) համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:
Ընկերությունը գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում 17.05.2006թ., գրանցման համարը՝ 222.120.00617, գրանցման վկայականի համարը՝ 03Ա 071487, ՀՎՀՀ՝ 00093621:

Ընկերության գտնվելու վայրն է ՀՀ, ք. Նոր Երևան, Վարդանանց փակուղի/8:

### Ընկերության գործունեության առարկան և նպատակները

Համաձայն հաստատված կանոնադրության Ընկերության գործունեության հիմնական ուղղություններից են՝

- ոռոգման, ջրամատակարարման համակարգերի համալիր կազմի մեջ մտնող ջրատնտեսական օբյեկտների (ջրառի գլխամասային կառուցվածքներ, ջրամբարներ, մակերևույթային ջրաղբյուրներից ջրառ իրականացնող պոմպակայաններ, կոլեկտորներ) պահպանումն ու շահագործումը:
- կազմակերպում է ջրի կուտակումը ջրամբարներում, կուտակված ջրերի բացթողում և մակերևույթային ջրաղբյուրներից ջրառի իրականացումը, մղումն տեղափոխումը մինչև սահմանազատման կետ՝ (ջրտուքի դիտակետերում), մատակարարում ջրօգտագործողներին, ջուր սպառողներին՝ սահմանված կարգի համաձայն,
- ջրառի, ջրտուքի կետերի և ջրաչափական կետերի կառուցում,
- ջրօգտագործողների, ջուր սպառողների կողմից (սահմանված և հաստատված) ներկայացված ջրօգտագործման պլանների հիման վրա կազմում է ընտրված օբյեկտների տվյալ ոռոգման շրջանի ջրառի և ջրի մատակարարման ամփոփ պլանը, ներկայացնում համապատասխան լիազորված կառավարման մարմնի հաստատմանը: Համակարգում է հաստատված պլան-ժամանակացույցով ջրառի և ջրտուքի իրականացման գործընթացը:
- Սահմանված կարգի համաձայն վարում է ջրառի, մատակարարված ջրի հաշվառում, կազմում հաշվետվություններ և ներկայացնում հիմնադրին:

-

## 2. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

*«Ջրառ» ՓԲԸ*
*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

| | Ծան | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|---|
| | | հազ.դրամ | հազ. դրամ |
| **Ակտիվներ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 6.1 | 48,614,726 | 51,555,308 |
| Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով | 6.2 | 8,131,571 | 6,181,601 |
| | | **56,746,297** | **57,736,909** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 6.3 | 32,045 | 38,605 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 6.4 | 1,341,865 | 1,175,396 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6.5 | 71,244 | 95,221 |
| | | **1,445,154** | **1,309,222** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **58,191,451** | **59,046,131** |
| **Պարտավորություններ** | | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 6.6 | 130,000 | 141,431 |
| | | **130,000** | **141,431** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | | - | - |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 6.7 | 15,285 | 244,067 |
| | | **15,285** | **244,067** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **145,285** | **385,498** |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 6.8 | 36,998,322 | 36,998,322 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 6.9 | 56,338,021 | 56,338,021 |
| Կուտակված վնաս | | (35,290,177) | (34,675,710) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **58,046,166** | **58,660,633** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **58,191,451** | **59,046,131** |

**Տնօրեն** — **Արտաշես Աբգարյան**

**Գլխավոր հաշվապահ** — **Արփինե Սողոյան**

-

## 3. Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

*«Ջրառ» ՓԲԸ*
*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա վերաբերյալ*

| | Ծան. | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|---|
| | | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Հասույթ | 6.10 | 1,384,605 | 1,270,604 |
| Վաճառքի ինքնարժեք | 6.11 | (2,926,488) | (2,812,951) |
| ***Համախառն վնաս*** | | ***(1,541,883)*** | ***(1,542,347)*** |
| Վարչական ծախսեր | 6.12 | (289,646) | (267,222) |
| Այլ եկամուտ | 6.13 | 1,229,700 | 945,307 |
| Այլ գործառնական ծախսեր | 6.14 | (12,351) | (27,573) |
| ***Գործառնական վնաս*** | | ***(614,180)*** | ***(891,835)*** |
| Ֆինանսական ծախսեր | 6.15 | (287) | (1,467) |
| ***Վնաս մինչև հարկումը*** | | ***(614,467)*** | ***(893,302)*** |
| Շահութահարկի գծով ծախս | | - | - |
| **Տարվա վնաս** | | **(614,467)** | **(893,302)** |

## 4. Սեփական կապիտալի մասին հաշվետվություն

*«Ջրառ» ՓԲԸ*
*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

| | Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Կուտակված վնաս | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| **Մնացորդ առ 1 հունվարի 2020թ** | **36,998,322** | **56,338,021** | **(33,782,408)** | **59,553,935** |
| Տարվա վնաս | - | - | (893,302) | (893,302) |
| **Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **36,998,322** | **56,338,021** | **(34,675,710)** | **58,660,633** |
| | | | | |
| **Մնացորդ առ 1 հունվարի 2021թ** | **36,998,322** | **56,338,021** | **(34,675,710)** | **58,660,633** |
| Տարվա վնաս | - | - | (614,467) | (614,467) |
| **Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **36,998,322** | **56,338,021** | **(35,290,177)** | **58,046,166** |

## 5. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

*«Ջրառ» ՓԲԸ*
*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

| | 2021թ.<br>հազ.դրամ | 2020թ.<br>հազ.դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Իրացումից մուտքեր | 1,498,126 | 1,497,975 |
| Վարձակալությունից մուտքեր | 15,384 | 8,528 |
| Շնորհների ստացում | 1,397,877 | 1,119,470 |
| Այլ մուտքեր | 1,689 | 957 |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (567,462) | (555,896) |
| Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ | (1,712,252) | (1,224,639) |
| Վճարված հարկեր և պարտադիր վճարներ | (622,711) | (709,061) |
| Այլ վճարումներ | (9,119) | (8,694) |
| ***Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսք*** | ***1,532*** | ***128,640*** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր | (14,622) | (9,818) |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(14,622)*** | ***(9,818)*** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Վարկերի և փոխառությունների մարում | (10,887) | (37,791) |
| ***Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(10,887)*** | ***(37,791)*** |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(23,977)** | **81,031** |
| Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություններ | - | - |
| **Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի** | **95,221** | **14,190** |
| **Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի** | **71,244** | **95,221** |

## 6. Ակտիվների, պարտավորությունների, եկամուտների ու ծախսերի բացվածքը և այլ տեղեկություններ

### 6.1 Հիմնական միջոցներ

*Հազար դրամ*

| | Շենքեր | Կառուց-վածքներ | Փոխանցող հարմա-րանքներ | Մեքենաներ, սարքա-վորում | Տրանսպոր-տային միջոցներ | Արտադրա-կան, տնտեսա-կան գույք, գործիքներ | Այլ հիմնա-կան միջոց ներ | Չշահա-գործվող հիմնական միջոցներ | Կառուց վող հիմնա-կան միջոց-ներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական կամ վերագնահատված արժեք*** | | | | | | | | | | |
| **Մնացորդն առ 31.12.2019թ.** | **3,796,400** | **55,634,275** | **16,839** | **1,907,044** | **113,223** | **25,104** | **8** | **19,099,861** | **130,057** | **80,722,811** |
| Ավելացումներ | 1,466 | - | - | 9,051 | - | 782 | - | - | - | 11,299 |
| Օտարումներ | (94,463) | - | - | (1,296,392) | - | - | - | - | - | (1,390,855) |
| **Մնացորդն առ 31.12.2020թ.** | **3,703,403** | **55,634,275** | **16,839** | **619,703** | **113,223** | **25,886** | **8** | **19,099,861** | **130,057** | **79,343,255** |
| Ավելացումներ | 5,119 | 8,392 | - | 6,895 | 7,575 | 200 | 1,168 | - | - | 29,349 |
| **Մնացորդն առ 31.12.2021թ.** | **3,708,522** | **55,642,667** | **16,839** | **626,598** | **120,798** | **26,086** | **1,176** | **19,099,861** | **130,057** | **79,372,604** |
| ***Կուտակված մաշվածություն*** | | | | | | | | | | |
| **Մնացորդն առ 31.12.2019թ.** | **552,026** | **22,938,641** | **10,501** | **1,534,217** | **111,288** | **24,637** | **8** | **616,627** | **-** | **25,787,945** |
| Տարվա ծախս | 138,617 | 2,853,077 | 560 | 303,157 | 679 | 304 | - | - | - | 3,296,394 |
| Օտարումներ | - | - | - | (1,296,392) | - | - | - | | | (1,296,392) |
| **Մնացորդն առ 31.12.2020թ.** | **690,643** | **25,791,718** | **11,061** | **540,982** | **111,967** | **24,941** | **8** | **616,627** | **-** | **27,787,947** |
| Տարվա ծախս | 119,127 | 2,840,368 | 560 | 9,300 | 169 | 340 | 67 | - | - | 2,969,931 |
| **Մնացորդն առ 31.12.2021թ.** | **809,770** | **28,632,086** | **11,621** | **550,282** | **112,136** | **25,281** | **75** | **616,627** | **-** | **30,757,878** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Զուտ հաշվեկշռային արժեք*** | | | | | | | | | | |
| Մնացորդն առ 01.01.2020թ. | 3,244,374 | 32,695,634 | 6,338 | 372,827 | 1,935 | 467 | - | 18,483,234 | 130,057 | 54,934,866 |
| Մնացորդն առ 31.12.2020թ. | 3,012,760 | 29,842,557 | 5,778 | 78,721 | 1,256 | 945 | - | 18,483,234 | 130,057 | 51,555,308 |
| **Մնացորդն առ 31.12.2021թ.** | **2,898,752** | **27,010,581** | **5,218** | **76,316** | **8,662** | **805** | **1,101** | **18,483,234** | **130,057** | **48,614,726** |

ա) Ավելացումն իրենից ներկայացնում է՝

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | hազ. դրամ | hազ. դրամ |
| Ձեռքբերումներ | 20,574 | 9,833 |
| Կապիտալ նորոգումներ | 8,775 | 1,466 |
| | **29,349** | **11,299** |

բ) Մաշվածության գծով ծախսը ներառվել է՝

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | hազ. դրամ | hազ. դրամ |
| Ինքնարժեքում | 1,018,086 | 1,296,393 |
| Վարչական ծախսերում | 1,875 | 7,304 |
| Ճանաչվել է հետաձգված ծախս | 1,949,970 | 1,992,697 |
| | **2,969,931** | **3,296,394** |

***Դիտարկում 1***

Կազմակերպությունը «Յուքոմ» ՓԲԸ-ից 2021թ մայիսի 18-ին կնքված պայմանագրի համաձայն ձեռք է բերել 4 հատ հեռախոս, որոնք չեն մուտքագրվել որպես հիմնական միջոցներ:

| Հ/Հ | Հեռախոսի անվանումը | Քանակը (հատ) | Արժեքը, ներառյալ ԱԱՀ (Դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Samsung Galaxy A32 64 ԳԲ Lavander 64 | 1 | 139,900 |
| 2 | Samsung Galaxy A32 128 ԳԲ Lavander | 1 | 159,900 |
| 3 | Samsung Galaxy Note 20 Ultra White | 1 | 599,900 |
| 4 | iPhone 12 Pro Max 128ԳԲ Black | 1 | 799,900 |
| | | ***4*** | ***1,699,600*** |

*Հեռախոսները փաստացի շահագործվում են կազմակերպության աշխատակիցների կողմից:*

*Առաջարկվում է կազմել Հիմնական միջոցների հանձնման-ընդունման ակտ, շահագործող անձանց հետ կազմել Շահագործման հանձնման ակտեր, մուտքագրել որպես հիմնական միջոց, հաշվարկել մաշվածություն:*

## 6. Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| ***Մնացորդ ժամանակաշրջանի սկզբում*** | ***6,181,601*** | ***4,188,904*** |
| Ավելացում | 1,949,970 | 1,992,697 |
| ***Մնացորդ ժամանակաշրջանի սկզբում*** | **8,131,571** | **6,181,601** |

*Դիտարկում 2*

Յուրաքանչյուր տարի հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսի մի մասը չի ճանաչվում Ֆինասական արդյունքներում:

Ծախսերը հետաձգվել են հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններում ճանաչելու նպատակով:

Խախտվել է Հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքը:

***Առաջարկվում է հետընթաց ճանապարհով ճշգրտել նախորդ տարիների ֆինանսական արդյունքները, ապաճանաչել սույն հոդվածով կուտակված՝ 8,131,571 հազար դրամ ակտիվ ճանաճված հետաձգված ծախսերը:***

## 6.3 Պաշարներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Հումք և նյութեր | 12,645 | 15,644 |
| Վառելիք | 3,065 | 6,727 |
| Պահեստամասեր | 8,900 | 8,634 |
| Շինանյութեր | 2,261 | 1,948 |
| Այլ նյութեր | 196 | 1,866 |
| Արագամաշ առարկաներ | 4,978 | 3,786 |
| | **32,045** | **38,605** |

### Պաշարների շարժն ըստ խմբերի

| | Մն. առ 01.01.2021թ. | Ավելացում (ա) | Նվազում (բ) | Մն. առ 31.12.2021թ. |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| Հումք և նյութեր | 15,644 | 6,054 | 9,053 | 12,645 |
| Վառելիք | 6,727 | 36,632 | 40,294 | 3,065 |
| Պահեստամասեր | 8,634 | 9,635 | 9,369 | 8,900 |
| Շինանյութեր | 1,948 | 3,571 | 3,258 | 2,261 |
| Այլ նյութեր | 1,866 | 171 | 1,841 | 196 |
| Արագամաշ առարկաներ | 3,786 | 5,819 | 4,627 | 4,978 |
| | **38,605** | **61,882** | **68,442** | **32,045** |

**ա) Ավելացում**

| | Մատակա-րարներից | Գնման ակտով | Եկամտային հարկ | Փոխհա-տուցում | Ընդամենը պաշարների ավելացում |
|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| Հումք և նյութեր | 5,782 | 227 | 45 | - | 6,054 |
| Վառելիք | 36,163 | - | - | 469 | 36,632 |
| Պահեստամասեր | 9,127 | 423 | 85 | - | 9,635 |
| Շինանյութեր | 3,312 | 216 | 43 | - | 3,571 |
| Այլ նյութեր | 171 | - | - | - | 171 |
| Արագամաշ առարկաներ | 5,773 | 38 | 8 | - | 5,819 |
| | **60,328** | **904** | **181** | **469** | **61,882** |

**բ) Նվազում**

| | Ինքնարժեք | Վարչական | Այլ | Ընդամենը ծախսված պաշարներ |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| Հումք և նյութեր | 8,995 | 58 | - | 9,053 |
| Վառելիք | 32,269 | 8,025 | - | 40,294 |
| Պահեստամասեր | 4,050 | 5,319 | - | 9,369 |
| Շինանյութեր | 3,235 | 23 | - | 3,258 |
| Այլ նյութեր | 76 | 5 | 1,760 | 1,841 |
| Արագամաշ առարկաներ | 3,269 | 1,358 | - | 4,627 |
| | **51,894** | **14,788** | **1,760** | **68,442** |

## 6.4 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ջրօգտագործողների գծով դեբիտորական պարտքեր (ա) | 1,328,853 | 1,169,419 |
| Այլ առևտրային դեբիտորական պարտքեր | 11,603 | 6,589 |
| Հանած՝ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը | (2,270) | (2,270) |
| ***Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ*** | ***1,338,186*** | ***1,173,738*** |
| Տրված կանխավճարներ | 2,166 | 76 |
| Հարկերի և պարտադիր վճարների գծով դեբիտորական պարտքեր | 646 | 1,582 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 867 | - |
| | **1,341,865** | **1,175,396** |

*ա) Ջրօգտագործողների գծով դեբիտորական պարտքերի շարժն ըստ ջրօգտագործողների*

| | Ջրօգտագործողներ | Մն. առ 01.01.2021թ. | Ավելացում | Նվազում | Մն. առ 31.12.2021թ. | Պարտքի ավելացում | Պարտքի նվազում |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | *ՀՀ դրամ* | *ՀՀ դրամ* | *ՀՀ դրամ* | *ՀՀ դրամ* | *ՀՀ դրամ* | *ՀՀ դրամ* |
| 1 | Արտաշատ ՋՕԸ | 421,781,460 | 517,952,897 | 443,833,400 | 495,900,958 | 74,119,497 | - |
| 2 | Էջմիածին ՋՕԸ | 511,638,722 | 508,711,263 | 448,984,200 | 571,365,785 | 59,727,063 | - |
| 3 | Արմավիր ՋՕԸ | 28,048,812 | 150,427,205 | 100,112,300 | 78,363,716 | 50,314,905 | - |
| 4 | Շենիկ | 57,603,008 | 105,738,573 | 163,341,463 | 117 | - | (57,602,890) |
| 5 | Արագածոտն ջրօգտագործողների ընկերություն | 58,212,464 | 101,716,639 | 103,207,730 | 56,721,373 | - | (1,491,091) |
| 6 | Թալին ՋՕԸ | 28,855,240 | 83,926,050 | 72,559,435 | 40,221,854 | 11,366,615 | - |
| 7 | Կոտայք | 60,685,878 | 76,964,776 | 86,393,295 | 51,257,359 | - | (9,428,519) |
| 8 | Երևան ՋՕԸ | 1,448,515 | 55,284,279 | 40,590,100 | 16,142,694 | 14,694,179 | - |
| 9 | Շիրակ ՋՕԸ | - | 45,978,277 | 28,873,600 | 17,104,677 | 17,104,677 | - |
| 10 | Վեոլիա ջուր ՓԲԸ | 453,741 | 5,703,938 | 5,315,740 | 841,939 | 388,199 | - |
| 11 | Արարատ ՋՕԸ | - | 1,414,897 | 1,414,897 | - | - | - |
| 12 | Հայաստանի Հանրապետության Արթիկի Համայնքապետարանի Աշ | 531,011 | 469,650 | 354,068 | 646,594 | 115,583 | - |
| 13 | Սյունիք ՋՕԸ | 93 | 228,241 | 228,334 | - | - | (93) |
| 14 | Բասեն-2011 արոտօգտագործողների միավորում | 67,522 | 96,130 | 73,000 | 90,652 | 23,130 | - |
| 15 | Փոքր Մանթաշ համայնքի արոտօգտագործողների միավորում | 91,914 | 80,116 | - | 172,030 | 80,116 | - |
| 16 | Արևշատ համայնքի արոտօգտագործողների միավորում | 149 | 65,788 | 42,527 | 23,410 | 23,261 | - |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***1,169,418,528*** | ***1,654,758,719*** | ***1,495,324,089*** | ***1,328,853,159*** | ***227,957,224*** | ***(68,522,593)*** |

*Դիտարկում 3*

*Որոշ ջրօգտագործողների դեբիտորական պարտքերի ավելացումը կարող է վկայել նրանց անհուսալի լինելու մասին: Առաջարկվում է կատարել վերլուծություն, անհուսալի դեբիտորական պարտքերի գծով ձևավորել պահուստաֆոնդ:*

### 6.5 Դրամական միջոցներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ընթացիկ հաշիվներ բանկերում (ՀՀ դրամ) | 71,202 | 95,220 |
| Դրամական միջոցներ դրամարկղներում | 42 | 1 |
| | **71,244** | **95,221** |

### 6.6 Վարկեր և փոխառություններ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ընթացիկ | - | - |
| Ոչ ընթացիկ | 130,000 | 141,431 |
| | **130,000** | 141,431 |

### 6.7 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 9,147 | 16,040 |
| Ստացված կանխավճարներ | 5,775 | 3,490 |
| Վճարվելիք հարկեր և այլ պարտավորություններ | 363 | 224,537 |
| | **15,285** | **244,067** |

### 6.8 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 36,998,322,168 դրամ, որը կազմում է 4,55,231 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 8,129.3 ՀՀ դրամ:
Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

### 6.9 Սեփական կապիտալի այլ տարրեր

Այս հոդվածի՝ 56,338,021 հազար դրամը գոյացել է այլ կազմակերպությունների միավորման ժամանակ ընկերության ձեռքբերված զուտ ակտիվների և հայտարարված կանոնադիր կապիտալի արժեքների դրական տարբերությունից:

### 6.10 Հասույթ

| | 2021 թ. | 2020 թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ջրամատակարարման ծառայություններ | 1,378,965 | 1,264,528 |
| Ջրի բացթողնման ծառայություններ | 5,640 | 6,076 |
| | **1,384,605** | **1,270,604** |

**Ջրամատակարարման գծով մատուցված ծառայության կազմն ու կառուցվածքն ըստ ջրօգտագործողների**

| | Ջրօգտագործողներ | 2021թ. | | 2020թ. | | 2021թ. աճ/(նվազում) 2020թ. նկատմամբ (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հասույթ (դրամ) | Տեսակարար կշիռը (%) | Հասույթ (դրամ) | Տեսակարար կշիռը (%) | |
| 1 | Արտաշատ ՋՕԸ | 431,627,414 | 31.30 | 306,072,788 | 24.20 | 125,554,626 |
| 2 | Էջմիածին ՋՕԸ | 423,926,053 | 30.74 | 392,198,549 | 31.02 | 31,727,504 |
| 3 | Արմավիր ՋՕԸ | 125,356,004 | 9.09 | 176,349,334 | 13.95 | (50,993,331) |
| 4 | Շենիկ | 88,115,477 | 6.39 | 98,028,372 | 7.75 | (9,912,894) |
| 5 | Արագածոտն ջրօգտագործողների ընկերություն | 84,763,866 | 6.15 | 85,790,937 | 6.78 | (1,027,072) |
| 6 | Թալին ՋՕԸ | 69,938,375 | 5.07 | 66,962,058 | 5.30 | 2,976,317 |
| 7 | Կոտայք | 64,137,314 | 4.65 | 61,403,503 | 4.86 | 2,733,811 |
| 8 | Երևան ՋՕԸ | 46,070,233 | 3.34 | 43,432,924 | 3.43 | 2,637,309 |
| 9 | Շիրակ ՋՕԸ | 38,315,231 | 2.78 | 28,032,145 | 2.22 | 10,283,086 |
| 10 | Վեոլիա ջուր ՓԲԸ | 4,753,282 | 0.34 | 4,583,141 | 0.36 | 170,141 |
| 11 | Արարատ ՋՕԸ | 1,179,081 | 0.09 | 1,211,593 | 0.10 | (32,512) |
| 12 | Հայաստանի Հանրապետության Արթիկի Համայնքապետարան | 391,375 | 0.03 | 236,383 | 0.02 | 154,992 |
| 13 | Սյունիք ՋՕԸ | 190,201 | 0.01 | 126,053 | 0.01 | 64,148 |
| 14 | Բասեն-2011 արոտօգտագործողների միավորում | 80,108 | 0.01 | 59,500 | 0.00 | 20,608 |
| 15 | Փոքր Մանթաշ համայնքի արոտօգտագործողների միավորում | 66,764 | 0.00 | 20,201 | 0.00 | 46,563 |
| 16 | Արևշատ համայնքի արոտօգտագործողների միավորում | 54,823 | 0.00 | 20,201 | 0.00 | 34,622 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1,378,965,599** | **100** | **1,264,527,681** | **100** | **114,437,919** |

### 6.11 Ինքնարժեք

| | 2021 թ. | 2020 թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Անձնակազմի վարձատրություն | 586,291 | 565,777 |
| Պաշարների գծով ծախսեր | 51,894 | 75,726 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 1,018,086 | 1,296,393 |
| Ստացված ծառայություններ | 1,269,307 | 873,644 |
| Այլ ծախսեր | 910 | 1,411 |
| | **2,926,488** | **2,812,951** |

### 6.12 Վարչական ծախսեր

| | 2021 թ. | 2020 թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Անձնակազմի վարձատրություն | 168,963 | 159,375 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 1,875 | 7,304 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 4,946 | 1,804 |
| Փոստի և հեռահաղորդակցության գծով ծախսեր | 4,671 | 4,988 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 23,177 | 21,705 |
| Գույքահարկի գծով ծախսեր | 4,083 | 1,427 |
| Սևանա լճի ջրառի բնօգտագործման վճար (ա) | 59,189 | 42,221 |
| Վառելիքի և նյութերի գծով ծախսեր | 9,593 | 12,002 |
| Վարձակալության գծով ծախսեր | 6,427 | 11,354 |
| Այլ ծախսեր | 6,722 | 5,042 |
| | **289,646** | **267,222** |

**ա) Սևանա լճի ջրառի բնօգտագործման վճար**

| | 2021 թ. | 2020 թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Սևանա լճի ջրառի բնօգտագործման վճար | 59,189 | 42,221 |
| | **59,189** | **42,221** |

***Դիտարկում 3***

***Վարչական ծախսերում ներառված ծախսային այս հոդվածն ըստ էության ինքնարժեքի ծախսային հոդված է:***

***Առաջարկվում է վերանայել ծախսի բնույթը, այսուհետ ներառել ջրամատակարարման ծառայությունների մատուցման ինքնարժեքում:***

### 6.13 Այլ եկամուտ

| | 2021 թ. | 2020 թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Շնորհներից եկամուտ | 1,216,322 | 937,915 |
| Գործառնական վարձակալությունից եկամուտ | 11,856 | 6,830 |
| Այլ եկամուտ | 1,522 | 562 |
| | **1,229,700** | **945,307** |

### 6.14 Գործառնական այլ ծախսեր

| | 2021 թ. | 2020 թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման գծով ծախսեր | 8,549 | 22,797 |
| Ստուգաչափման և փորձաքննության գծով ծախսեր | 3,731 | 745 |
| Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման գծով ծախսեր | - | 3,564 |
| Տույժերի գծով ծախսեր | 71 | 467 |
| | **12,351** | **27,573** |

### 6.15 Ֆինանսական ծախսեր

| | 2021 թ. | 2020 թ. |
|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ |
| Տոկոսային ծախսեր վարկերի գծով | 287 | 1,467 |
| | **287** | **1,467** |

Արդշինբանկ ՓԲԸ ստացված վարկի հաշվեգրված տոկոսներն են:

### 6.16 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կապակցված կողմերի հետ գործարքը ռեսուրսների, ծառայությունների կամ պարտականությունների փոխանցումն է կապակցված կողմերի միջև՝ անկախ վճարի գանձումից:

Հաշվետու ժամանակաշրջանում կապակցված կողմերի հետ գործարքները բացահայտվել են հետևյալ ուղղություններով.

ա) Գործարքներ հիմնադրի հետ.

| | Գործարքներ | | Պարտավորություններ (դեբիտորական/(կրեդիտորական)) | |
|---|---|---|---|---|
| | **2021թ.** | **2020թ.** | **2021թ.** | **2020թ.** |
| Ստացված սուբսիդիա | 1,089,330 | 1,089,330 | - | - |
| | ***1,089,330*** | ***1,089,330*** | **-** | **-** |

բ) Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ.

| | **2021թ.** | **2020թ.** |
|---|---|---|
| | **Հազար դրամ** | **Հազար դրամ** |
| Աշխատավարձ և կարճաժամկետ փոխհատուցումներ | 7,086 | 8,178 |

## 7. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

### 7.1 Ֆինանսական հաշվետվողականության հայեցակարգ

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

### 7.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

### 7.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

### 7.4 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

### 7.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, չափվում է սկզբնական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը առկա բոլոր հիմնական միջոցների համար արտահայտված է ժամկետով: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

| | |
|---|---|
| Շենքեր և շինություններ | 20 տարի |
| Մեքենաներ և սարքավորումներ | 5 տարի |
| Հաշվողական և համակարգչային տեխնիկա | 1 տարի |
| Այլ հիմնական միջոցներ | 5 տարի |

### 7.6 Շնորհներ

Հիմնական միջոցներին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ծախսերին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

## 7.7 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և վաճառքի գնից՝ (հանած համալրման և վաճառքի ծախսումները) նվազագույնով: Ինքնարժեքը հաշվարկվում է՝ կիրառելով առաջին մուտք, առաջին ելք (ՖԻՖՈ) մեթոդը:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակ բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

## 7.8 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

## 7.9 Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա:

Գործարքի արդյունքը կարելի կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,

բ) հնարավոր է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի ընկերություն,

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

## 7.10 Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում: Նման դեպքերում հարկերը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: